# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2217 գ. Գեղաշեն, 1-ին փողոց, 30 Վարչական շենք, Հեռ. (060) 286013, էլ.փոստ gechashen67@mail.ru

26.11.2018թ. N01/211-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

**Հարգելի Պետրոսյան**

Ձեր հրապարակմանն ենք ուղարկում Գեղաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 2 էջ

**Համայնքի ղեկավար՝** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Կատարող՝ Լ. Հովհաննիսյան
Հեռ. 077427455

ԳԵՂԱՇԵՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵԼԻՑ No 211
«26» 11 2018թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 79

## ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով, Գեղաշեն համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 08-ի N 32-Ա որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018թվականի նոյեմբերի 09-ի N41-Ա որոշումը, որոշում եմ.

1.Հաշվի առնելով, որ Դերենիկ Մկրտչյանի որդին՝ Աղասի Դերենիկի Մկրտչյանը, զոհվել է ՀՀ զինված ուժերի մարտական դիրքերում, համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից կանխիկ 300000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ որպես օգնություն հատկացնել Դերենիկ Մկրտչյանի ընտանիքին:
2.Կոտայքի մարզի Գեղաշեն համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Հայկուհի Անտոնյանին 7 աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

20<u>18</u> թ.
<u>Նոյեմբեր</u> <u>22</u>

գ.Գեղաշեն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղաշեն, 060286014 gechashen67@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 80

### «ԻՄ ՔԱՅԼԸ» ԴԱՇԻՆՔԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՀԼԻՃ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Իմ քայլը» դաշինքի ՛ Աբովյանի շտաբի պետ Պավել Ցուգունյանի դիմումը, որոշում եմ.

1.«Իմ քայլը» դաշինքի ներկայացուցչին 2018 թվականի նոյեմբերի 27-ին ժամը 12:00-15:00-ին տրամադրել համայնքի Մշակույթի տան/հասցեն՝ 2փողոց 13շենք/ դահլիճը՝ նախընտրական քարոզարշավ անցկացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

2018 թ.
Նոյեմբեր 23

գ.Գեղաշեն